

Տօնացուցական խրատները մասնաւոր նկարագիր մ'ունին եւ աւելի Երուսաղէմի Եկեղեցւոյն կը պատշաճին: Ա'արժէ ուսումնասիրել այս ճաշոցը:

«Եւ ես յետնեալ հողա մեղաւորս Ազնաւորս, որ եմ ի կարգի աշխարհականութեան, արուեստիւ հաց- (հ)եփեաց, որ է էքմէքճի վարպետ, ի յերկրէ Կամախու՝ ի գեղջէն Սեննկու, որ այժմ բնակիմ ի Կոստանուպօլսի, ի կողմն Պալաթու մերձ յեկեղեցւոյն Հրեշտակապետին Միքայէլի, որ է ի ձեռս Հայոց, ի ժամանակս Թագաւորութեան Օսմանցոց Սուլթան Իպրահիմի որդի Սուլթան Մեհմէտին, որ եւ բազում ժամանակս նստաւ ի յԱնդրինուպօլսի, ի հայրապետութեան Զուղայեցի Հայոց Տեառն Յակոբայ եւ փոխանորդի Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, Նստողի յԷջմիածնի, ի վաղարշապատու քաղաքի: Եւ ի պատրիարքութեան Հայոց Կոստանգինուպօլսի իմաստագեղի Տեառն Ստեփաննոսի՝ աշակերտին վերոյգրեցելոյ հայրապետին:

Ես նոյն եւ անարժան մահտեսի Ազնաւորս՝ ի հալալ արդեանց իմոց եւ յարգար վաստակոց իմոց ըստացայ զմաշու գիրքս, որ եւ կոչի Տարեգիրք, որ է բուրաստան եւ գերդաստան ամենից, հնոց եւ նորոց կտակարանաց: Եդի զսա առ ի յիշատակ ի դուռն յեկեղեցւոյն Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, որ է Խալաթիս մերձ ի Կոստանգինուպօլսիս, զոր յիշատակ իմ եւ ձեռողաց իմոց. հօր Շաղալաթին եւ մօր Նազվարթին եւ իւր հօրն Քամալին եւ կողակցի Աստուտին: Եւ իմ պապուն Ազնաւորին եւ մամուն Զուլալին, եւ երեց եղբարց իմոց Յակոբին, Մանկտաւազին եւ Խաշատուրին եւ քվերն իմոյ Զուլալին եւ կողակցին իմոյ Պաղտատին...»

«Դարձեալ յիշեցնիք աղօթս ձեր մաքրափայլս զսրբազան քահանայն զՏէր Գասպարն, որ եւ նա բազում յաշխատանօք եւ յուրիւք երկամբք վանաց եւ վաստակեցաւ ի գրեւ տալն եւ այլն մինչեւ ի հասուցանել աւարտում զուրբ գիրս եւ յետոգունց (յետ յոգունց) ժամանակաց ի կատարելութիւն էած զգիրքս զայս...»

«Դարձեալ եւ ես Աստոն երէց զձոյս զրոցս՝ կողակցին պաղատանաւք աղաչեմ զձեզ... յիշեցնիք զմեզաւոր Աստոն երէց զրիշս... եւ ուսուցիչն իմ զՏէր Փիլիպպոսն եւ զՏէր Խաշատուրն... Կատարեցաւ